# Արձանագրություն թիվ 4

ՀԱԳ-ԳՀԱՊՁԲ-17/01 ծածկագրով, փակման հարցում ընթացակարգով ապրանքների՝ Համակարգչային տեխնիկայի ձեռքբերման, գնահատող հանձնաժողովի նիստի

Ք.Երևան 21 հուլիսի 2017թ.

ժամը 11:00

**Մասնակցում էին՝**

Հանձնաժողովի նախագահ՝ Նաիրա Մելիքբեկյան

Անդամներ՝ Արթուր Եղիազարյան

Էդգար Սարգսյան

Գնումների համակարգող՝ Ռազմիկ Առաքելյան

**ՕՐԱԿԱՐԳ**

1. ՀԱԳ-ԳՀԱՊՁԲ-17/01 ծածկագրով, ապրանքների՝ Համակարգչային տեխնիկայի ձեռքբերման գների նվազեցման միաժամանակյա բանակցությունների մասին,
2. Հանձնաժողովի որոշումների մասին,
3. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրվա, ժամի և վայրի մասին,

**1. Գների նվազեցման միաժամանակյա բանակցություններ.**

1.1 Սույն թվականի հուլիսի 21-ին, ժամը 11:00-ին նշանակված, ՀԱԳ-ԳՀԱՊՁԲ-17/01 ծածկագրով, ապրանքների՝ Համակարգչային տեխնիկայի ձեռքբերման ընթացակարգի թիվ 1-ին և 2-րդ չափաբաժիններով, գների նվազեցման միաժամանակյա բանակցություններին՝ « ԻՔՍ ԱՐՏ », «Ինո-Թեքնոլոջի», « Կոմպմարկետ» ՍՊ ընկերությունները (ներկայացուցիչները), որոնց էլ փոստերին ուղարկվել էր համապատասխան ծանուցումը 19.07.2017թ-ին, բանակցություններին չներկայացան և միայն « Կոմպմարկետ» ՍՊԸ-ն էլ փոստով տեղեկացրեց իրենց կողմից առաջարկված գների նվազեցման անհնարինության մասին, ուստի և բանակցությունները համարվեցին չկայացած:

**2. Հանձնաժողովը որոշեց.**

2.1 Թիվ՝ 1-ին և 2-րդ չափաբաժինները համարել չկայացած, նախահաշվային արժեքները գերազանցելու պատճառով:

2.2 Ըստ նվազագույն գնային առաջարկների՝ 1-ին և 2-րդ տեղեր զբաղեցրած մասնակիցներ ճանաչել ներքոնշյալ ընկերություններին, հետևյալ չափաբաժիններով՝

| Չ/Հ | Ապրանքի անվանումը | 1-ին տեղ զբաղեցրած Մասնակցի անվանումը | 2-րդ տեղ զբաղեցրած Մասնակցի անվանումը |
|---|---|---|---|
| 3 | Տեսածրիչ (սկաներ) | « Միկրորինգ » ՍՊԸ | « ԻՔՍ ԱՐՏ » ՍՊԸ |
| 4 | Ցանցային կուտակիչ | « ԻՔՍ ԱՐՏ » ՍՊԸ | ------ |

2.3 Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում կատարել առաջին և երկրորդ տեղ զբաղեցրած մասնակիցների՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ:

2.4 Ծանուցել առաջին տեղը զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել 6-րդ հավելվածով նախատեսված գրությունը, որին կցվում է իր կողմից հաստատված՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը՝ համաձայն հավելված N 6.1-ի

(ապրանքների անվանումը և տեխնիկական բնութագրերը): Սույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթերը չներկայացվելու դեպքում մերժել առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը:

**3. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման վերաբերյալ.**

4.1 Հանձնաժողովի հաջորդ նիստը կկայանա՝ <<Հայաստանի ազգային գրադարան>> ՊՈԱԿ-ի նիստերի սրահում (Թամանյանական մասնաշենքի 2-րդ հարկ), ք. Երևան, Տերյան 72 հասցեում, առաջին տեղը զբաղեցրած Մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեից ստացված եզրակացությունը, հանձնաժողովի անդամներին տրամադրվելուն հաջորդող ոչ ուշ, քան երրորդ աշխատանքային օրը, ժամը 11:00 -ին:

Ընդունվեց կողմ՝ 3, դեմ՝ 0 :

Հանձնաժողովի նախագահ՝

Նաիրա Մելիքբեկյան ____________

Անդամներ՝

Արթուր Եղիազարյան ____________

Էդգար Սարգսյան ____________

Գնումների համակարգող՝

Ռազմիկ Առաքելյան ____________